



Մ ՈՒՐԲ Զ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



ԲԱՐԵԿԵՆՈՒԱՆ ԱՌԱՋԱԽՈՐԱԾ ՊԱՇԵՐ

01 ՓԵՏՏՈՒԲԱՐ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	էջ 1
Կատարեալ եղէֆ (է)	էջ 3
Ուսուցում աղօթքի մասին	էջ 4
Ծանուցում	էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(63.18-64.12)

Չըլլայ որ ընդմիշտ կորսնցնենք Սիրոնը, քո սուրբ լեռդ. որովհետեւ ահա մեր թշնամիները առժամաբար տիրեցին մեզի, ոտնակոխ ըրին քո սրբարանդ, եւ մենք եղանք առաջուան նման, երբ տակաւին մեր Տէրը չէիր դուն, երբ դեռ քո անունդ չէինք կրեր: Եթէ երկինքը պատուէիր եւ երկիր իջնէիր՝ լեռները քո դիմացդ պիտի դողային ու հալէին մոմի պէս, ինչպէս կրակը կ'այրէ անտառները եւ կը շոգիացնէ ծովերը. հակառակորդներդ պիտի ճանչնային քո անունդ եւ հեթանոսներ պիտի դողային քո դիմացդ. ճիշդ ինչպէս քանիցս իջար եւ անսպասելի հրաշագործութիւններէդ լեռները սասանեցան: Ոեւէ ականջ երբեւիցէ լսած չէ, ոեւէ աչք երբեք տեսած չէ Աստուած մը, բացի քեզմէ, որ իրեն յուսացողներուն ողորմի այնպիսի գործերով որ դուն ըրիր: Դուն օգնութեան կը հասնիս բոլոր անոնց որոնք ուրախութեամբ արդարութիւն կը գործեն եւ քո ճամբաներէդ կը քալեն: Բայց մեզի դէմ բարկացած ես հիմա, որովհետեւ մեզք գործեցինք եւ մոլորեցանք: Մեզքով վարակուած եւ պղծուած ենք բոլորս ալ. մեր արդար սեպած գործերն իսկ գարշելի են քեզի համար: Մեր անօրէնութիւններուն պատճառով

չոր տերեւներու պէս կը թափթփինք եւ հովերը կը քչէն մեզ: Ա՛լ աղօթող չկայ քեզի, չկայ մէկը որ սթափելով քեզի ապաւինի. երես դարձուցիր մեզմէ եւ մեր մեղքերուն պատճառով մեզ նեղութեան մատնեցիր: Բայց դարձեալ, ո՛վ Տէր, մեր Հայրն ես դուն. մեր Հայրն ես դուն. մենք կաւ ենք, դո՛ւն ես Բրուտը, եւ բոլորս ալ ձեռագործդ ենք: Շատ մի՛ բարկանար մեզի, Տէ՛ր, յաւիտեան մի՛ յիշեր մեր մեղքերը: Տե՛ս, ահա, քո ժողովուրդդ ենք բոլորս: Սուրբ քաղաքներդ աւերուեր են, Սիրոնը անբնակ է, Երուսաղէմը՝ աւերակ: Մեր սուրբ եւ փառաւոր տաճարը ուր մեր հայրերը քեզ կ'օրհնէին՝ հրկիզուեցաւ, եւ բոլոր հոյակապ կառոյցները կործանեցան: Այս բոլորին կրնա՞ս անտարբեր մնալ, ո՛վ Տէր, միթէ լո՞ւռ պիտի մնաս եւ շարունակե՞ս պատուհասել մեզ:

Բայց դարձեալ, ո՛վ Տէր, մեր Հայրն ես դուն. մենք կաւ ենք, դո՛ւն ես Բրուտը, եւ բոլորս ալ ձեռագործդ ենք:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՏԻՏՈՍԻՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (1.1-11)

Ես, Պօղոս, Աստուծոյ ծառան եւ Յիսուս Քրիստոսի առաքեալը, կոչուած եմ Աստուծոյ ընտրեալները բերելու հաւատքի եւ ճշմարտութեան ճանաչումին - այն ճշմարտութեան՝ որ աստուածապաշտութեամբ կը գտնուի -, որպէսզի յաւիտենական կեանքի յոյսը ունենան: Յաւիտենական ժամանակներէն

... կոչուած եմ Աստուծոյ ընտրեալները բերելու հաւատքի եւ նշմարտութեան ցանաչումին - այն նշմարտութեան՝ որ աստուածպաշտութեամբ կը գտնուի...

Իսկ առաջ անսուտն Աստուած ինք խոստացաւ այդ կեանքը, իսկ հիմա յարմար ժամանակը եկած համարելով՝ այդ խոստումը յայտնեց իր Աւետարանով, որուն քարոզութեան կոչուեցայ

մեր փրկիչ Աստուծոյ հրամանով:

Ո՛վ Տիտոս, մեր հասարակաց հաւատքի ճամբով իմ սիրելի որդիս, թող Հայրն Աստուած եւ մեր փրկիչը Յիսուս Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն քեզի:

Քեզ կրետէ թողուցի, որպէսզի եկեղեցիին պէտքերը հոգաս եւ զայն կազմակերպես՝ իւրաքանչիւր քաղաքի մէջ երէցներ կարգելով, ինչպէս որ քեզի պատուիրեցի: Երիցութեան թեկնածուն պէտք է անմեղադրելի ըլլայ, մէկ կնոջ այր ըլլայ եւ հաւատացեալ զաւակներ ունենայ, որոնք անառակութեամբ եւ անհնազանդութեամբ ամբաստանուած չըլլան: Արդարեւ եկեղեցւոյ առաջնորդը որպէս Աստուծոյ տնտես՝ պէտք է անմեղադրելի ըլլայ: Պէտք չէ յանդուգն, բարկացող, գինեմոլ, կռուազան կամ շահամոլ ըլլայ, այլ՝ հիւրասէր, բարին սիրող, զուսպ, արդար, մաքուր եւ ժուժկալ: Պէտք է ամբօրէն պահէ իր սորված վստահելի վարդապետութիւնը, որպէսզի կարենայ ուղիղ ուսուցումով յորդորել ուրիշները եւ յանդիմանել հակառակորդները: Որովհետեւ բազմաթիւ անհնազանդներ, դատարկախօսներ եւ միտք պղտորողներ կան, մանաւանդ հրէութենէ դարձածներուն մէջ, որոնց բերանը պէտք է փակել, որովհետեւ անոնք ամբողջ տուններ կը քանդեն, շահամոլութենէ տարուած ուսուցանելով այն՝ ինչ որ պէտք չէ ուսուցանել:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ (7.37-52)

Տօնին վերջին եւ հանդիսաւոր օրը, Յիսուս ոտքի կանգնած բարձրաձայն կ'ըսէր. «Ո՛վ որ ծարաւ է, թող ինծի գայ եւ խմէ: Ով որ ինծի կը հաւատայ, ինչպէս Գիրքը կ'ըսէ, “Անոր սիրտէն կեցաստու ջուրի գետեր պիտի բղխին”»: Յիսուս ասիկա կ'ըսէր Հոգիին համար, որ իրեն հաւատացողները պիտի ընդունէին. իսկ Հոգին տակաւին չէր տրուած, քանի Յիսուս փառաւորուած չէր:

Ժողովուրդէն ոմանք երբ լսեցին այս խօսքերը, ըսին. «Այս է ճշմարիտ մարգարէն»: Ուրիշներ կ'ըսէին. «Օճեալն է, Քրիստոսը»: Իսկ ոմանք ալ կ'ըսէին. «Միթէ Գալիլիայէ՞ն պիտի գայ Քրիստոսը: Գիրքը չ'ըսեր թէ Քրիստոս Դաւիթ թագաւորի սերունդէն պիտի ըլլայ եւ Դաւիթի քաղաքին՝ Բեթլեհէմի մէջ պիտի ծնի»: Եւ Յիսուսի պատճառով տարակարծութիւններ յառաջ եկան: Ոմանք ուզեցին ձերբակալել զինք, բայց ոչ ոք համարձակեցաւ:

Երբ տաճարին պահակները վերադարձան, քահանայապետներն ու փարիսեցիները հարցուցին անոնց. «Ինչո՞ւ զինք հոս չբերիք»: Պահակները պատասխանեցին. «Այդ մարդուն պէս խօսող երբեք չենք տեսած»: Փարիսեցիները ըսին. «Ի՞նչ, դո՞ւք ալ խաբուեցաք: Իշխանաւորներէն կամ փարիսեցիներէն ոեւէ մէկը հաւատա՞ց անոր: Մեր օրէնքները չգիտցող տգէտ ամբոխը միայն հաւատաց: Անոնք արդէն իսկ նզովուած են»:

Նիկողեմոս, փարիսեցիներէն մէկը, որ նախապէս գիշերով եկած էր Յիսուսի մօտ, ըսաւ անոնց. «Արդեօք մեր օրէնքները մարդս կը դատե՞ն նախ քան զինք լսելը եւ գիտնալը թէ ի՞նչ ըրած է»: Անոնք պատասխանեցին Նիկողեմոսի. «Միթէ դո՞ւն ալ Գալիլիայէն ես. քննէ՛ Գիրքերը եւ պիտի տեսնես թէ Գալիլիայէն մարգարէ չ'ըլլեր»:

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ
ԱՌԱՋԱԴՈՐԱՅ ՊԱՀՔԻ

(ԾԻԱԿԱՆ ԵՒ ԿՐՈՆԱԿԱՆ
ԲՈՅՈՑՈՒԹՅԱՆ ԵՒ ԹԻՒ 37)

ԼԷ

ԿԱՏԱՐԵԱԼ ԵՂԵՔ (Է)

ԳԱՐՆԻԿ Ք.Գ.

Կը վերադառնամ «Կատարեալ եղէք»ի շարքին: Վերջին յօդուածը որ գրած էի, կը համառօտէր գերմանացի նահատակ աստուածաբան Պոնհոֆֆերի մեկնաբանութիւնը Մատթէոսի 5.43-48 հատուածին, որ «Թշնամիները սիրել» անուներ կը կրէ:

Հատուածին համար իմ քաղած երեք մեկնաբանութիւններէն վերջինն էր անիկա: Նախորդ երկուքն էին՝ Մաղաքիա արք. Օրմանեանի մեկնաբանութիւնը եւ Զարեհ արք. Ազնաւորեանի մեկնաբանութիւնը:

Իր այն ուսուցումին վերջաւորութեան, Յիսուս կատարեալ ըլլալը հասկցած է՝ իբր երկնաւոր Հօր նմանելու ընթացք: Բայց ինչպէ՞ս է, որ մէկը կրնայ երկնաւոր Հօր նմանիլ: Կամ ի՞նչ նմանութեան մասին է խօսքը:

Աւելորդ է ըսել, որ կոչը Աստուծոյ նոյն էութիւնը ունենալու չի վերաբերիր, այսինքն՝ Յիսուս չ'ըսեր, թէ մէկը որպէսզի կատարեալ ըլլայ՝ պէտք է Աստուծոյ նոյն էութիւնը ունենայ: Յիսուսի միտք բանին ուրիշ է, եւ ինքն իսկ յտակօրէն բանաձեւած է, ըսելով. «Սիրեցէ՛ք

ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարիք ըրէ՛ք ձեզ ատողներուն եւ աղօթեցէ՛ք անոնց համար, որոնք ձեզ կը չարչարեն ու կը հալածեն: Այսպիսով դուք ձեր երկնաւոր Հօր գաւակները պիտի դառնաք, որովհետեւ ան իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ. եւ անձրեւ կը տեղացնէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն վրայ»: Արդ, երկնաւոր Հօր պէս կատարեալ ըլլալ

կը նշանակէ՝ անոր գաւակները դառնալ: Եւ անոնք որ երկնաւոր Հօր գաւակներն են՝ անոր նմանելու կ'աշխատին կամ կը գործեն անոր պէս:

Կատարեալ ըլլալու մասին Յիսուս խօսած է, ինչպէս նշած եմ, մեծահարուստ երիտասարդին հետ հանդիպման ընթացքին: Իրուագը կը գտնուի Մատթէոսի աւետարանին 19.16-22-ին մէջ: Իրուագին տարբերակները կը կարդանք նաեւ Մարկոսի աւետարանին (10.17-31) եւ Ղուկասի աւետարանին (18.18-30) մէջ:

Այստեղ պիտի համառօտեմ այն հանդիպման մասին Օրմանեան սրբազանի մեկնաբանութիւնը:

Ան դրուագի տարբերակներուն ակնարկելով, նախ ըսած է, թէ անոնք երեք աւետարանիչներուն կողմէ «գրեթէ բառացի ճշդութեամբ» պատմուած են: Ապա

«Արքայութեան արժանանալու պայմանները իմանալ» ուզողին նենգամիտ մէկը չ'երեւելը եւ Արքայութեան արժանանալու փափաքը իրապէս ուզելը տեսած է:

Այս անձը հարուստ դասակարգէ երիտասարդ մըն էր: Օրմանեան սրբազան մեկնելով Ղուկաս աւետարանիչի տեղեկութենէն, որ զայն իշխան կը կոչէ, գրած է, թէ տիրողսը «կը տրուէր քաղաքներու եւ գիւղերու ժողովրդապետներուն կամ ժողովարաններու հոգաբարձուներուն»: Յետոյ ենթադրած՝ որ Յիսուսի դիմող անձը «Յորդանանի այս կողմը Հրէաստանի մանր քաղաքներէն մէկուն ժողովարանին հոգաբարձուներէն» էր:

Յիսուս այդ իշխանաւորին «գիւղը իջեւանած էր, խրատներ խօսած էր» ու ան ալ լսած էր, «լաւ տպաւորութիւն ստացած էր», եւ ուզած իմանալ «թէ աղքատներուն տրուած երանութիւններէն ինքը գո՞ւրկ պիտի մնայ, թէ ոչ Յիսուս հարուստներուն համար ալ ուրիշ ճամբայ ունէր ցուցնելիք»:

Ան կը դիմէր Յիսուսի, ըսելով. «Բարի՛ վարդապետ, ի՞նչ բարի գործ պէտք է կատարեմ՝ յաւիտենական կեանքը ընդունելու համար»:

Եւ Յիսուս անոր ցոյց կու տար «յաւիտենական կեանքը» մտնելու ճամբան, որ պատուիրանները պահելն էր:

Երիտասարդը կ'աճապարէր հարցնելու, թէ Յիսուսի խօսքը ո՞ր պատուիրաններուն մասին էր: Սրբազանը բացատրած է թէ՛ «Հրէից համար նախապատուութիւն ունեցող պատուիրանները՝ մաքրութեանց եւ խտրութեանց արտաքին պատուիրաններն էին. կ'երեւի թէ այն կողմը աւելի կը հակէին հարցնող մեծատունին ալ կարծիքները»:

Եւ Յիսուս «յառաջ կը բերէ» Տասնաբանեայ պատուիրաններուն այն տարրերը, որոնք «ընկերային կեանքի հետ կապուած են»: Անոնց «նախապատուութիւն» տուած է Յիսուս, ըսած է սրբազանը: Որո՞նք են այն պատուիրանները.՝ Մի՛ սպաններ, մի՛ շնար, մի՛ գողնար, սուտ վկայութիւն մի՛ տար, պատուէ՛ հայրդ ու մայրդ եւ սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս: Վերջին պատուիրանը չենք տեսներ Մարկոսի եւ Ղուկասի տարբերակներուն մէջ: Մատթէոս զայն «աւելցուցած է» իբր նախորդներուն «ամփոփումը»: Անիկա Տասնաբանեայի ցանկին մաս չի կազմեր: Մովսէս մարգարէ զայն գրի առած է Ղեւտացիներու գիրքի Սրբութեան եւ Արդարութեան օրէնքներու շարքին մէջ (Ղ 19. 19):

Երիտասարդին պատասխանին եւ հարցումին վրայ, թէ ինք այդ բոլորը իր պատանութենէն ի վեր պահած է, եւ ուստի դեռ ի՞նչ կը պակսի իրեն: Յիսուս ըսած է. «Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ, զնա՛, ինչ որ ունիս՝ ծախէ եւ աղքատներուն տուր. այդպիսով երկիրքի մէջ գանձ պիտի ունենաս, եւ յետոյ՝ հետեւէ՛ ինձի»: Այս խօսքին վրայ, կ'ըսէ դրուագը, երիտասարդը տրտում-տխուր կը մեկնի, «որովհետեւ շատ հարուստ էր»:

Օրմանեան սրբազան Յիսուսի «կատարեալ ըլլալ»-ու հրաւէրը այսպէս բացատրած է. «Արքայութեան արժանի ըլլալու երկու աստիճաններ կան. մին սովորական աստիճանն է, որ պատուիրաններու պահպանութեամբ կը բաւականանայ, միւսը կատարեալ աստիճանը՝ որ բարեգործական արժանիքի առաւելութիւններ կը

Երկնաւոր
Հօր պէս
կատարեալ
ըլլալ կը
նշանակէ՝
անոր
գաւակները
դառնալ:

կատարեալ
ըլլալու
ճամբուն մէջ
գտնուողը
բարեգոր-
ծութիւն
կ'ընէ եւ
«աշխարհա-
յին հոգերն
ալ թողլով»՝
ինքզինք
Աւետարանի
տարածման կը
նուիրէ:

պահանջէ: Յիսուս տեսնելով,
որ մեծատունը սովորական
արդարութեան աստիճանը
արդէն ունենալ կը կարծէ,
զայն կը հրաւիրէ կատարեալ
աստիճանին թեւակոխել»:
Ըստ իրեն, կատարեալ ըլլալու
ճամբուն մէջ գտնուողը
բարեգործութիւն կ'ընէ եւ
«աշխարհային հոգերն ալ
թողլով»՝ ինքզինք Աւետարանի
տարածման կը նուիրէ: Իսկ
Աւետարանի տարածման
նուիրուել կը նշանակէ
չարչարանք եւ նեղութիւն
յանձն առնել կամ խաչը կոնակը
առնել եւ Յիսուսի հետեւիլ:

Սրբազանը արդարօրէն
կրկնած է, որ Յիսուս Արքայութիւն մտնելու համար
պատուիրաններուն պահպանութիւնը «բաւական
սեպած էր», եւ միայն կատարեալ ըլլալու իր կոչին
առնչութեամբ է, որ «ինչքերու գոհողութիւն»
առաջարկած էր, եւ կոչ ուղղած իրեն հետեւելու եւ իրեն
հետ «աւետարանական քարոզութեամբ» զբաղելու:

Եզրակացնելով. կատարեալ ըլլալը բարեգործութեան
եւ աւետարանչութեան ճամբով կ'անցնի:

ՄԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ՄԱՏԹԷՈՍԻ ԱՖԵՏԱՐԱՆԻՆ

ՀԵՂԻՆԱԿ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱՖՈՐԵԱՆ
ԽԱՐԵԳԻՆ՝ ԳԵՂԱՌԿ Ք. Գ.

Զ ԳԼՈՒԻ

ՈՒՄՈՒՅՈՒՄ ԱՊՈԹԵՐ ԱՄԱՐԱ (2):
«Ուրեմն, այսպէս աղօթեցէ՛.-
Հայր մեր երկնաւոր,
սրբաբանուի՛ անուռը.
Թող գայ արեւոյթիւնդ,
թող կատարուի քու կամքդ,
ինչպէս որ երկինքի մէջ՝
այնպէս ալ երկրի վրայ:
Ամենօրեայ մեր հացը
այսօր եւս մեզի տուր:
Ներէ՛ մեր յանցանքները,
ինչպէս որ մեզ կը ներեմք անոնց՝
որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք գործած են:
Եւ թոյլ մի՛ տար
որ փորձութեան մէջ իյնանք.
այլ մեզ չարէն ազատէ՛:
Որովհետեւ քու կը եմ միշտ
արեւոյթիւնը, գորութիւնը եւ փառքը. ամէն» (5.9-13):

Ղուկասի աւետարանին մէջ կը
կարդանք. «Պատահեցաւ որ Յիսուս տեղ
մը կ'աղօթէր: Երբ աղօթելը վերջացուց, իր
աշակերտներէն մէկը ըսաւ.- Տէ՛ր, մեզի

աղօթել սորվեցուր, ինչպէս որ Յովհաննէս
Մկրտիչ իր աշակերտներուն սորվեցուց»
(Ղկ 11.1): Կը թուի, թէ ժամանակակից
ուսմանը իրենց աշակերտներուն յատուկ
աղօթք մը կը սորվեցնէին: Աղօթք մը որ
իրենց ուղղութիւնը ցոյց տար եւ յայտնէր
այն կերպը, որուն համաձայն կրնային
Աստուծոյ դիմել: Ըստ երեւոյթին, այդպիսի
աւանդութեան մը հետեւած էր Յովհաննէս
Մկրտիչ՝ իր աշակերտներուն աղօթել
սորվեցնելով:

Նոյնպէս ալ Յիսուսի աշակերտները եկած
էին իրեն եւ խնդրած, որ աղօթել սորվեցնէ:
Մատթէոսի աւետարանը խնդրողական
դիմումի մը մասին ակնարկութիւն չունի:
Բայց շատ հաւանական է Ղուկասի
աւետարանին տեղեկութիւնը ընդունել իբր
առիթ «Հայր մեր»ի ուսուցումին: Մատթէոս
աւետարանիչ թեմայական խմբաւորումներ
ստեղծելու իր գրելածներն մէջ, «Հայր մեր»ը
առած է զուտ ուսուցումներ ընդգրկող
բաժնին մէջ, որ Լերան Քարոզն է, եւ նաեւ
ճիշդ քովը աղօթքի մասին պատգամի մը:

Ուրեմն, Մատթէոս աւետարանիչ
Տէրունական աղօթքի ծննդեան
դրդապատճառը նկատի չէ՛ առած
եւ պարզապէս զայն տեղափոխած է
ուսուցողական շրջագիծի մէջ:

Հիմա տեսնենք, թէ «Հայր մեր»ը ի՞նչ
կառոյց ունի, որովհետեւ կառոյցը հասկնալը՝
կ'օգնէ մեզի որ ըսուածը հասկնանք:

- Կառոյցը:
- 1.- Դիմում-կոչ.
 - 2.- Աստուծոյ վերաբերող խնդրանքներ.
 - 3.- Մարդոց վերաբերող խնդրանքներ.
 - 4.- Փառաբանանք:

Այս կառոյցը կարելի է երկուքի վերածել.
առաջին երկու մասերը մէկ բաժնի եւ վերջին
երկու մասերը ուրիշ բաժնի: Դիմում-կոչը
եւ Աստուծոյ վերաբերող խնդրանքները
Աստուծոյ յատկացուած բաժինն են, իսկ
Մարդոց վերաբերող խնդրանքները եւ
փառաբանանքը՝ մարդ էակին յատկացուած
բաժինը:

Կառոյցի այս կերպը նորութիւն մը չէր:
Այս կերպը կիրարկուած էր Տասնաբանեայ
պատուիրաններուն ալ պարագային: Տաս-
նաբանեայ պատուիրաններուն կառոյցը եւս
ունի Աստուծոյ վերաբերող պատուիրաններու
բաժին մը եւ մարդոց կեանքին վերաբերող
բաժին մը:

«Հայր մեր երկնաւոր»: «Մեր»ին մասին արդէն խօսեցայ:

Համայնական այս աղօթքը «Տէրունական» կը կոչենք, որովհետեւ մեր Տէրը՝ Յիսուս է, որ սորվեցուցած է մեզի:

Եթէ այս աղօթքին ուրիշ բացատրութիւն մը ուզենք տալ՝ կրնանք «Եկեղեցւոյ աղօթք» ալ կոչել: «Հայր մեր»ով եկեղեցին իր ամբողջութեան մէջ կ'աղօթէ: Այսինքն՝ երբ «Հայր մեր»ը կ'ըսենք, ոչ թէ միայն մենք անհատապէս Աստուծոյ հետ դէմ առ դէմ կը գտնուինք, այլ նաեւ եկեղեցւոյ միւս անդամներուն հետ մեր միասնութիւնը կը զգանք: Աստուած մեզ առանձին առանձին չէ

«Հայր մեր»ով եկեղեցին իր ամբողջութեան մէջ կ'աղօթէ:

կանչած, այլ մեզ իբր ժողովուրդ կանչած է:

Աստուծոյ համար տրուած «Հայր» անունը Յիսուսի բերած նորութիւնն էր, թէ Հին Կտակարանէն կու գար:

Բ. Օրէնքի գիրքին մէջ գրուած է. «Ան քու Հայրդ չէ՞, որ քեզի կեանք տուաւ, քեզ ստեղծեց ու քեզ հաստատեց» (32.6): Կամ՝ «Որպէսզի սրտիդ մէջ գիտնաս թէ՛ ինչպէս մարդ մը կը խրատէ իր որդին, քու Տէր Աստուածդ ալ քեզ այնպէս կը խրատէ» (Բ. Օր 8.5):

Եսայի մարգարէ գրած է.

«Երկինքէն նայէ,

քու սուրբ ու փառաւոր բնակութենէդ տե՛ս:

Ո՛ր է քու նախանձ ու զօրութիւնդ:

Քու աղիքներուդ գալարուիլը եւ ինծի ըրած ողորմութիւններդ արգիլուեցա՞ն:

Քանզի մեր Հայրը դուն ես, թէեւ Աբրահամը մեզ չի գիտեր ու Իսրայէլ մեզ չի նանչնար.

Դո՛ւն, ո՛վ Տէր, մեր Հայրն ես ու սկիզբէն քու անունդ մեր Փրկիչն է» (63.15-16):

Նաեւ՝

«Բայց հիմա, ո՛վ Տէր, դուն մեր Հայրն ես:

Մենք կաւ ենք ու դուն մեր Բրուտն ես» (64.8):

«... դուն մեր Հայրն ես: Մենք կաւ ենք ու դուն մեր Բրուտն ես»:

Նաեւ՝ Երեմիա մարգարէ գրած է. «Բայց ըսի.- Քեզ

ինչպէ՞ս որդիներուն մէջ դնեմ

եւ քեզի այն ցանկալի երկիրը, ազգերուն խիստ գեղեցիկ ժառանգութիւնը տամ:

Ու ըսի.- Ինծի Հայր իմ պիտի աղաղակես եւ ինծի հետեւելէն ետ պիտի չդառնաս» (3.19):

Ովսէ մարգարէ գրած է.

«Երբ Իսրայէլը մանուկ էր, զանիկա կը սիրէի

ու իմ որդիս Եգիպտոսէն կանչեցի:

Որչափ զանոնք կանչեցի, այնչափ անոնք ինձմէ հեռացան» (11.1-2):

Մաղաքիա մարգարէ գրած է.

«Միթէ ամէնքը մէկ Հայր չունի՞ն, միթէ մէկ Աստուած չստեղծե՞ց մեզ» (2.10):

Սաղմոսներուն գիրքին մէջ կը կարդանք.

«Ինչպէս հայր մը կը գուրգուրայ իր զաւակներուն վրայ, այնպէս Տէրը կը գուրգուրայ իրմէ ակնածողներուն վրայ» (103.13):

Եւ այլն եւ այլն:

Այս մէջբերումներէն կը յայտնուի, թէ Աստուծոյ հայրութեան գաղափարը շատ յստակ կերպով կայ: Արդ, Յիսուս եւս զԱստուած կը ներկայացնէ իբր Հայր: Արդեօք Յիսուս նոյն ականգնութիւնը կը շարունակէ զԱստուած Հայր կոչելով, թէ Աստուծոյ հետ նոր յարաբերութիւն մը կը թելադրէ:

Թէեւ Հին Կտակարանին մէջ Աստուած պարբերաբար «Հայր» կոչուած եւ համարուած է, սակայն Աստուծոյ հայրութիւնը երբեք Հրեայ ժողովուրդի կրօնական փորձառութեան մէջ մնայուն եւ ընդհանրացած ապրում չէ եղած: ԶԱստուած Հայր կոչելը հրեայ ժողովուրդին համար անսովոր բան մըն էր: Յիսուս՝ զԱստուած իբր իր ժողովուրդին Հայրը ներկայացնելով, կը յայտնէր անոր անմիջական խնամատարութիւնը բոլոր անոնց համար՝ որոնք զինք կը խոստովանին: Աստուած հեռաւոր Զօրութիւնը չէ, այլ շատ մօտիկ խնամատարն է: Այս Հայրութիւնը եւ որդիութիւնը Աստուծոյ Հոգիին ստացման այնպիսի փորձառութիւն են, ուր Աստուծոյ խնամքը եւ մարդուն բարոյական եւ

Աստուած հեռաւոր Զօրութիւնը չէ, այլ շատ մօտիկ խնամատարն է:

Յիսուսի հետեւելու պատասխանատուութիւնը միասնաբար կը զարգանան: Այդ է, որ ըսել ուզած է Պօղոս առաքեալ երբ գրած է. «Հետեւաբար, եղբայրներ, պէտք է ապրինք մեր մարմինն համար եւ մարմնաւորապէս: Որովհետեւ եթէ մարմնաւորապէս ապրիք՝ պիտի մեռնինք. իսկ եթէ Հոգին օգնութեամբ մեր մեղքերը սպաննէ՛ք՝ պիտի ապրիք: Աստուծոյ որդիները անոնք են՝ որոնք Աստուծոյ Հոգիով կ'ստացնորդուին: Արդ, դուք Հոգին ստացա՛ք՝ ո՛չ թէ ծառայ դառնալու եւ դարձեալ վախով ապրելու համար, այլ Հոգին ստացա՛ք՝ Աստուծոյ որդիներ ըլլալու համար: Այդ Հոգիով է որ զԱստուած Աբբա, այսինքն Հայր կը կոչենք, եւ նոյն Հոգին ինք վկայութիւն կու տայ մեր հոգիին, թէ Աստուծոյ որդիներ ենք: Իսկ եթէ որդի ենք, կը նշանակէ, թէ նաեւ ժառանգորդներ ենք: Այո՛, ժառանգորդներն ենք Աստուծոյ եւ ժառանգակից՝ Քրիստոսի. եւ իր չարչարաբաններուն մասնակից կ'ըլլանք՝ որպէսզի իր փառքին եւս մասնակից ըլլանք» (Հռ 8.12-17):

Ինչո՞ւ կ'ըսէ. «երկնաւոր»:

Հայրն Աստուած վեր է աշխարհէն. պարզապէս գերազանցօրէն բարձր է բոլոր աստուածութիւններէն կամ աստուած համարուած բոլոր փայտեղէն, քարեղէն, պղնձեղէն կամ ոսկեղէն կողմերէն: Աստուած անոնցմէ վեր՝ էութիւնն է:

«Երկնաւոր»ը նաեւ կը թելադրէ՝ երկրէն անջատուած իմաստը: Նոյն իմաստն է, որ կը կրկնուի «Սուրբ եղիցի անուն քոյ»ին առիթով: Աստուած Անջատուածն է: Ան նիւթական եւ անմաքուր իրականութիւններէն զատ էութիւնն է:

«Սրբաբանուի անունը»: Ի՞նչ կը նշանակէ ասիկա: Ինչո՞ւ՝ Աստուծոյ անունը սուրբ է՞ արդէն:

«Սուրբ» բառը չորս նշանակութիւններ ունի.

- անջատ կամ անջատուած.
- մաքուր.
- Աստուծոյ նուիրուած. եւ
- փառաւոր:

Առաջին նշանակութեան առնչութեամբ:

Աստուած նիւթական եւ անմաքուր իրականութիւններէն անջատուած էութիւնն է. այլ բացատրութեամբ մը՝ Աստուծոյ էութիւնը եւ նիւթական ու անմաքուր իրականութիւնները իրարմէ զատ են:

Երկրորդ նշանակութեան առնչութեամբ:

Տասնաբանեայի երրորդ պատուիրանը կ'ըսէ.

«Տիրոջ՝ քու Աստուծոյ անունը պարապ տեղ բերանդ չառնես» (Ելք 20.7): Ինչո՞ւ համար է այս պատուիրանը: Որպէսզի Աստուծոյ անունը չանարգուի: Եթէ սուտ նպատակներու համար գործածենք Աստուծոյ անունը՝ զայն անմաքուր դարձուցած կ'ըլլանք:

Երրորդ նշանակութեան առնչութեամբ:

Հօր Աստուծոյ անունը սրբութիւնը յայտարարելը մեզմէ առաքինի վարք եւ գործունէութիւն կը պահանջէ: Այդ յայտարարութիւնը նաեւ՝ կեանքով ու գործով Աստուծոյ նուիրուած մընայու յանձնառութիւնն է:

Հօր Աստուծոյ անունը սրբութիւնը յայտարարելը մեզմէ առաքինի վարք եւ գործունէութիւն կը պահանջէ:

Պօղոս առաքեալ Աստուծոյ անունը համարած է վատ վարքը եւ չար գործը, եւ պատգամած որ քրիստոնեաներ ապրին եւ գործեն այնպէս՝ որ Աստուծոյ անունը չանարգուի (Հմմտ Հռ 2.23-24, 29. Ա. Տմ 6.1-5): Ան նաեւ պատգամած է, որ անոնք ապրին այնպէս, որ Աստուած փառաւորուի (Հմմտ Ա. Կր 6.20):

Աստուծոյ անունը փառաւորումի կէտով՝ մենք հասած կ'ըլլանք

Չորրորդ նշանակութեան:

Աստուծոյ անունը մաքուր պէտք է պահուի ո՛չ թէ լեզուի վրայ, այլեւ քրիստոնեայի կեանքին եւ գործին մէջ: Այդպէս է, որ անոր անունը փոխանակ անարգուելու՝ կը փառաւորուի: «Սրբաբանուի՛ անունը» խօսքը, ուրեմն, ոչ թէ միայն Աստուծոյ անունը մաքուր պահուելուն կը վերաբերի, այլ նաեւ Անոր անունը փառաւորումին («սրբաբանել» բայը թէ՛ Աստուծոյ անունը մաքրութիւնը կը թելադրէ, եւ թէ զայն փառաբանելու իմաստը ունի):

«...թող գայ արքայութիւնդ»: Ինչո՞ւ համար Յիսուս ուզեց, որ մենք այս աղօթքին մէջ արքայութեան գալը միշտ ըզձալով ըսենք՝ «թող գայ»:

Գիտենք, որ Աստուծոյ արքայութիւնը չորս հասկացողութիւններ ունի.

1) Անիկա կը նոյնանայ Քրիստոսի անձին հետ: Քրիստոսի անձը այդ արքայութեան գալուստն էր: Ան է արքան այդ տէրութեան, եւ անոր մէջն է այդ արքայութիւնը:

2) Անոր հպատակներն են բոլոր անոնք՝ որ Աստուծոյ կամքին համար կ'ապրին եւ կը գործեն: Որքան որ Աստուծոյ կամքը կ'ապրուի

եւ կը գործադրուի՝ այնքան կը հաստատուի Աստուծոյ արքայութիւնը այս երկրի վրայ եւ այս երկիրքին ներքեւ:

3) Աստուծոյ արքայութիւնը նաեւ հաւատացեալներու ամբողջութիւնն է, այլ խօսքով՝ եկեղեցին է անիկա: Բայց որպէսզի եկեղեցին եւ Աստուծոյ արքայութիւնը իրարու հետ չչփոթենք՝ յաճախ կը գործածուի սա բացատրութիւնը, թէ եկեղեցին Աստուծոյ վախճանական արքայութեան ներկայ պատկերն է կամ ներկայ հանգրուանն է, եւ կամ՝ նախապատկերը:

4) Եւ վերջապէս՝ Աստուծոյ արքայութիւնը, ինչպէս ըսի, վախճանական իրականութիւն մըն ալ է. այսինքն՝ ապագայ այն «հանգրուան»ն է, երբ Աստուծոյ կամքը վերջնականապէս պիտի տիրապետէ:

Հիմա, այս «թող գայ արքայութիւնդ» խօսքը ո՞ր մէկ հասկացողութեան կը վերաբերի:

Վերջինին: Որովհետեւ առաջին երեքը պատմականօրէն իրականացած են եւ կ'իրականանան:

Ազօթքին յաջորդ խնդրանքը կու գայ լրացնելու.

«Թող կատարուի քու կամքդ, ինչպէս որ երկիրքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ»:

Աստուծոյ արքայութիւնը ինչպէ՞ս կրնայ գալ:

Աստուծոյ կամքին կատարումով:

Իսկ ինչպէ՞ս հասկնալ այն ակնարկութիւնը, թէ Աստուծոյ կամքը երկիրքի մէջ կը կատարուի արդէն:

Ինչպէ՞ս է որ կը կատարուի անիկա երկիրքի մէջ: Որո՞նք են, որ այդ կամքը կը կատարեն այնտեղ:

Հրեշտակները:

Կարգալ Եբրայեցիներու նամակին 1.4-14-ը: Այս հատուածին մէջ թէեւ Յիսուսի հետ համեմատութեամբ կը ներկայացուին հրեշտակները, բայց մէկէ աւելի հաստատումներով կը պարզուի, թէ հրեշտակները Աստուծոյ կամքին հնազանդութեան մէջ են: Աստուծոյ կամքը անոնց կողմէ բացարձակապէս գործադրելի է: Անոնք թէպէտ «քիչ մը» բարձր են մարդոցմէ, սակայն անոնց կը ծառայեն՝ որպէսզի Աստուծոյ կամքը կատարուի: Աստուծոյ կամքը հրեշտակներուն համար ամէն ինչ է:

Հետեւաբար, ինչպէս երկիրքի մէջ կամ հրեշտակներուն կողմէ Աստուծոյ կամքը կը կատարուի, նոյնպէս ալ թող երկրի վրայ կատարուի անիկա: Ինչպէս որ հրեշտակները Աստուծոյ կամքին բացարձակապէս հնազանդ են, երկրի վրայ ալ մարդիկ պէտք է բացարձակապէս հնազանդ ըլլան Աստուծոյ կամքին, որպէսզի Աստուծոյ արքայութիւնը գայ:

Իսկ ի՞նչ է Աստուծոյ կամքը: Առաջին.

Ըստ Աստուածաշունչին, Աստուծոյ կամքը մարդ էակին արդարացումն է: Աստուած կ'ուզէ, որ մարդը արդարանայ եւ փրկութեան սահմանուի: Անոր կամքն է, որ մարդիկ հաւատան Իր զրկածին՝ Որդիին: Ան որ Քրիստոսի կը հաւատայ՝ «յաւիտեանական կեանք պիտի ունենայ», գրուած է Յովհաննէսի աւետարանին մէջ (6.40):

Երկրորդ.

Աստուծոյ կամքն է, որ մենք Քրիստոսի հաւատալով նորոգուինք եւ դառնանք նոր արարած կամ նոր մարդ մը: Քանի նոր մարդն է, որ Աստուծոյ կամքը կրնայ կատարել: Պօղոս առաքեալի բացատրութեամբ, «նորոգուած միտքերով նոր մարդ»ն է, որ կրնայ ընտրել լաւը, «այսինքն՝ ինչ որ բարի է, ընդունելի է» Աստուծոյ (Հմմտ Հռ 12.2):

Երրորդ.

Աստուծոյ կամքն է, որ մենք սրբութեամբ ապրինք: Պօղոս առաքեալ քանի մը անգամներ ըսած է, թէ Աստուծոյ կամքն է, որ մարդիկ սուրբ կեանք ունենան. օրինակ Ա. Թեսաղոնիկեցիներու նամակին մէջ գրած է. «Աստուծոյ կամքն է՝ որ դուք սրբուիք» (4.3): Ոչ թէ միայն անհատ մարդիկ սրբութեան կեանք պէտք է ունենան, այլ նաեւ Աստուծոյ նոր ժողովուրդը՝ իբր ամբողջութիւն սրբութեամբ պէտք է ապրի:

նոր մարդն է, որ Աստուծոյ կամքը կրնայ կատարել:

Աստուծոյ կամքն է, որ մենք սրբութեամբ ապրինք:

(Շարունակելի 23)

ԵՐԵՍՆՈՐԵԱԿ

Կրոնար, 01 Փետրուար 2009

Բարեպետական Առաջատար Աստուծոյ Պաշտ

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Երեւան, 04 Փետրուար 2009

06.00-10.00 Ս. Հաղորդութիւն

Առաջատար պահքի

Հրագրութիւն, 05 Փետրուար 2009

11.00 Աղօթածողով

Քոյրերու ժողով

Հաբաթ, 07 Փետրուար 2009

Ս. Սարգսի եւ Ս. Մարտիրոս

Կրոնար, 08 Փետրուար 2009

Ծնունդէն ետք Ե. Կրոնար

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Երեւան, 10 Փետրուար 2009

19.00 «Երաժշտութիւն եւ հաւատք»

Երիտասարդական ներկայացում/զրոյց

Հրագրութիւն, 12 Փետրուար 2009

11.00 Աղօթածողով

Քոյրերու ժողով

Հաբաթ, 14 Փետրուար 2009

Տեսնուողութիւն

18.00 Արարողութիւն

18.30 Հրավառութիւն

Կրոնար, 15 Փետրուար 2009

Ծնունդէն ետք Զ. Կրոնար

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Երեւան, 17 Փետրուար 2009

Ս. Ղեմուդեան

Հրագրութիւն, 19 Փետրուար 2009

Ս. Վարդանան

11.00 Աղօթածողով

Քոյրերու ժողով

18.30 Ս. Պատարագ

Կրոնար, 22 Փետրուար 2009

Բոնի Բարեպետական

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Երեւան, 24 Փետրուար 2009

19.00 «The Davinci Code»

Ֆիլմի ցուցադրութիւն եւ զրոյց

Երեւան, 25 Փետրուար 2009

Մեծ Պաշտ Գ. օր

19.00 Հսկում

Խորհրդածութիւն՝ ձաշակենք

«Հաւատով խոստովանիմ»ը Ա.

Հրագրութիւն, 26 Փետրուար 2009

Մեծ Պաշտ Դ. օր

11.00 Արեւազայ

Խորհրդածութիւն՝

«Ողորմածութիւն»

Կրոնար, 01 Մարտ 2009

Արարողութիւն Կրոնար

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶ

Հաբաթ, 14 Փետրուար 2009

Ժամերգութիւն եւ
սանդիսներու ընծայում 18.00
Հրագրութիւն 18.30

Արձանագրե՛՛ք Ձեր երեւանցիները
Հեռաձայնելով դիմահասոյն
514 331 5445 x202

ՀԻՄՆԱԿՆԵՐՈՒ ԱՅԺԵԼՈՒԹԻՒՆ

Բարեհաճեցէ՛ք հեռաձայնել Արժ.

Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի.

514 331 5445 x203 կամ 514 909 5203

Սոյն թերթիւն ե-նամակով ստանալու
Համար Ձեր ե-Հասցէն ուղարկե՛՛ք
eglise58@sourphagop.com-ը

Հոգեհաճութեան Ձեր
արձանագրութիւնները նախօրոք
Կանգնե՛՛ք Կառնիկի
Եկեղեցիոյ դիմահասոյն

Համայնքի ծառայութեան Համար
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԴԻՄՆԱՍՏՈՒՆԸ

ԲՁԾ Է

Երկուշաբթի Ուրբաթ

ժամը 8.30-էն 16.00

Համե՛՛ք Կառնիկի բարեօրոգութեան՝
514 331 5445 x202

Կամ Հոգիին՝

514 331 5445 x203

Կամ գրել Հեռագրով ե-Հասցէին՝
eglise58@sourphagop.com